

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«-----» -----2017թ.

N---Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 597-րդ և 605-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Երևան համայնքին գույք նվիրաբերելու մասին» N156 -Ա որոշման 1-ին կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետությունից որպես նվիրաբերություն ընդունել Երևան քաղաքի Նուբարաշենի վարչական շրջանի Չնքուշի 14 հասցեում գտնվող նախկին ննջարանային մասնաշենքի «Ա» մասից 650.9 քառ. մետր (1-ին հարկից 236.93 քառ. մետր, 2-րդ հարկն ամբողջությամբ՝ 266.03 քառ.մետր և 3-րդ հարկի աստիճանավանդակին հարող մասից 147.94 քառ. մետր) և 14,705,100.0 դրամ մնացորդային հաշվեկշռային արժեքով շենքային տարածքը, մասնաշենքին հարող 1684.0 քառ. մետր հողատարածքը, նշված հողատարածքում առկա՝ 476.0 քառ. մետր մակերեսով սպորտային հրապարակը և յուրաքանչյուրը 10.5 քառ. մետր մակերեսով 2 գրուցարան-տաղավարը՝ առանց հաշվեկշռային արժեքների, նշված հողատարածքը եզրափակող 96.3 գծամետր երկարությամբ և 7,109.0 դրամ մնացորդային արժեքով բետոնե ցանկապատը՝ Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից մանկապարտեզի կազմակերպման նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի միջնորդությամբ՝ Երևանի քաղաքապետը դիմել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության /այսուհետ՝ նախարարություն/ ենթակայությանը հանձնված «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ազատ մասնաշենքը Նուբարաշեն վարչական շրջանին տրամադրելու հարցով՝ նոր մանկապարտեզ հիմնելու նպատակով:

ՀՀ կառավարության **2016** թվականի օգոստոսի **11**-ի N **831**-Ն որոշմամբ՝ նախարարության ենթակայությանը հանձնված նախկին «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանվել է «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) և շուրջօրյա խնամք իրականացնող կազմակերպությունը վերափոխվել է ցերեկային ծառայությունների մատուցման կազմակերպության, ինչի արդյունքում նախկին ննջարանային մասնաշենքի «Ա» մասում առաջացել են ազատ տարածքներ:

Վերանվանման արդյունքում՝ նախատեսվել է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված գործառույթները ամբողջությամբ իրականացնել նախկին ննջարանային մասնաշենքի «Բ» մասում և վարչական շենքում:

Միաժամանակ, ըստ Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության, վարչական շրջանում գործում է միայն «Երևանի թիվ **125** մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը, ինչի հետևանքով **2016** թվականի ընթացքում հերթագրման մեջ գտնվող շուրջ **345** երեխա գրկվել են մանկապարտեզ հաճախելու հնարավորությունից:

Խնդրի լուծման ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ համապատասխան տարածքը նվիրաբերվել է Երևան համայնքին՝ Նուբարաշեն վարչական շրջանում երկրորդ մանկապարտեզը կազմակերպելու համար:

Նոր մանկապարտեզ հիմնելու նպատակով Երևանի քաղաքապետի առաջարկությունը համարվել է համահունչ կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների բնույթին և մանկապարտեզի գործունեությունը կարող է դիտարկվել որպես մեկ համալիր գործունեություն՝ կազմակերպության գործունեության հետ:

Վերոնշյալը հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության **2017** թվականի փետրվարի **23**-ի «Երևան համայնքին գույք նվիրաբերելու մասին» N**156**-Ա որոշման համաձայն՝ Երևան քաղաքի Նուբարաշենի վարչական շրջանի Չնքուշի **14** հասցեում գտնվող նախկին ննջարանային մասնաշենքի «Ա» մասից **650.9** քառ.մետր (**1**-ին հարկից **236.93** քառ. մետր, **2**-րդ հարկն ամբողջությամբ՝ **266.03** քառ.մետր և **3**-րդ հարկի աստիճանավանդակին հարող մասից **147.94** քառ. մետր) և **14,705,100.0** դրամ մնացորդային հաշվեկշռային արժեքով շենքային տարածքը, մասնաշենքի հարող **1684.0** քառ. մետր հողատարածքը, նշված հողատարածքում առկա՝ **476.0** քառ.մետր մակերեսով սպորտային հրապարակը և յուրաքանչյուրը **10.5** քառ.մետր մակերեսով երկու հատ գրուցարան-տաղավարները՝ առանց հաշվեկշռային արժեքների, նշված հողատարածքը եզրափակող **96.3** գծամետր երկարությամբ և **7,109.0** դրամ մնացորդային արժեքով բետոնե ցանկապատը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրաբերվել է Երևան քաղաքային համայնքին՝ մանկապարտեզ կազմակերպելու նպատակով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **597**-րդ հոդվածի **1**-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության (նվիրաբերության) պայմանագիրը համարվում է լուծված:

Ելնելով վերագրյալից և հաշվի առնելով ՀՀ կառավարության վերը նշված որոշման **1**-ին կետը և **2**-րդ կետի **1**-ին ենթակետը՝ Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ԿԱՍ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ
ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ